Digitally signed by
GALSTYAN NVER
2708680250
Date: 2023.05.24

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2023-2024 ուսումնական տարվա

Խմբակի ծրագիր 2_րդ, դասարան, շաբաթական՝ 1 ժամ, տարեկան՝ 32

Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոց

Դասվար՝ Նարինե Խաչատրյան

Դասընթացի խնդիրներ

Մանկական գրականությունը խոսքի արվեստ է, որն էապես առանձնանում է իրեն բնորոշ առանձնահատկություններով, անձի ձևավորման ու կրթության գործում հնարավորությունների բազմազանությամբ: Կարդալով և ընկալելով, վերլուծելով ու մեկնաբանելով գրական ստեղծագործությունները՝ աշակերտները հայտնվում են մի իրավիճակում, երբ պետք է երկխոսության մեջ մտնեն ստեղծագործության, գրողի ու կերպարների հետ, պետք է հանդես բերեն բանավոր ու գրավոր խոսքի կարողություններ, վերլուծական, ստեղծագործական միտք, երևակայություն, համադրելու, հակադրելու և այլ կարողություններ:

Առաջարկվող խմբակը հնարավորություն է տալիս հայ և համաշխարհային մանկագիրների ճանաչված ու արժեքավոր ստեղծագործություններն ուսումնասիրել, վերլուծել, կարդալ, պատմել, բանավիճել, պատասխանել տրված հարցադրումներին և առաջադրել նոր հարցադրումներ:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

Այսօր, առավել քան երբևէ , անհրաժեշտություն է աշակերտների մոտ ձևավորել հետաքրքրություն ինչպես հայ, այնպես էլ աշխարհի մանկագիրների գրական ստեղծագործությունների վերաբերյալ:

Մանկական գրականություն խմբակը հնարավորություն կտա հնարավորինս խորությամբ ճանաչել ոչ միայն հայ, այլև աշխարհի մանկագիրներին և նրանց ստեղծագործություններին: Խմբակում ընդգրկվածները կսովորեն, սահուն և վարժ կարդալ, պատմել, հայեցի, ճիշտ,

արտահայտիչ արտասանել , ինչպես նաև ծանոթանալ հայ ժողովրդական բանահյուսության նմուշներին։

«Մանկական գրականություն» խմբակի հիմնական նպատակը սովորողների գեղագիտական ճաշակի, քննադատական մտածելակերպի զարգացմանը, առողջ արժեհամակարգի ձևավորմանը նպաստելն է։

ԽՆԴԻՐՆԵՐ

Հետաքրքրություն առաջացնել մանկական գրականության նկատմամբ։

Ակտիվացնել խոսքը, զարգացնել բառապաշարը։

Գործնական ծանոթություն մանկական գրականության ստեղծագործությունների տեսակներին' ձևավորել գիտելիքներ գրողի և գրքի մասին

Ճանաչել ժողովրդական հեքիաթը, առածը, հանելուկը, ասացվածքը, առակը, առակի ու բանաստեղծության տարբերությունները

Չափածո պատմություններն ու հեքիաթները տարբերել իրարից։

Բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները

★ Դասընթացի թեմատիկ բովանդակությունը կառուցված է համապատասխան դասարանների սովորողների համար մատչելիության սկզբունքի ապահովմամբ և ուղղված է նրանց անձնային աճի ապահովմանը:

★ Դասընթացի բովանդակությունը կառուցված է գրականության, արվեստի մյուս ճյուղերի, տեղեկատվական տեխնոլոգիաների փոխադարձ կապի ապահովման տրամաբանությամբ:

Ակնկալվող արդյունքները

1. Սովորողները ձեռք կբերեն գիտելիքներ մանկական գրականության ստեղծագործությունների վերաբերյալ:
2. Զարգացնեն խոսքի, մտքի արվեստը:
3. Կարողանան վերլուծել, բանավիճել, տարբերակել, գնահատել:
4. Կարողանան ինքնուրույն եզրահանգում կատարել և սեփական կարծիք դրսևորել, իրավիճակը գնահատելու կարողություն ձեռք բերել:
5. Ցուցաբերեն լեզվի և հաղորդակցման այլ միջոցների հմտություններ:

6. Կարողանան թիմում աշխատել, համագործակցել, ճկունություն և հարմարվողականություն ցուցաբերել:
7. Տիրապետեն ՏՀՏ գործիքների կիրառմանը:

Ընդհանուր նկարագրություն

Սովորողներին տրվում են համապատասխան նյութեր, գրքեր / նախապես որոշված էջերի քանակով/ Խմբակին ակտիվ մասնակցության նպատակով:

ԾՐԱԳԻՐ

«Մանկական գրականություն» խմբակի համար առաջարկվող ժամաքանակը տարեկան 34 ժամ է (շաբաթական 1 դասաժամ), 2_րդ դասարանի աշակերտների հետ:

 Հայ ժողովրդական բանահյուսություն 6 ժամ

Հանելուկ	1 ժ
Հաշվելուկ	1 ժ
Շուտասելուկ	1 ժ
Անունկապուկ.	1 ժ առած-ասացվածք.
1 ժ	
Խաղիկներ	1 ժ

Առակ	10 ժամ
Մխիթար Գոշ:	2 ժ
Ծիտն ու ջայլամը	
Արջն ու աղվեսը	

Վարդան Այգեկցի	2 ժ
Գարու հաշիվ	
Այծեր և գայլեր	

Խնկո Ապեր 2 ժ

Խոզն ու ագռավը

Կարիճն ու գորտը

2 ժ

Եզոպոս 2 ժ

Աղվեսն ու խաղողը

Գայլերն ու ոչխարները

Իվան Կռիլով։ 2 ժ

Կապիկն ու ակնոցը

Համերգ

Հեքիաթներ 12 ժամ

Հայկական ժողովրդական հեքիաթներ

Հովհաննես Թումանյան 3 ժ

Պոչատ աղվեսը

Չախչախ թագավորը

Բեմականացնել”Պոչատ աղվեսը”

Ղազարոս Աղայան 3 ժ

Մեղուն և աղավնին

Հնարագետ ջուլհակը

Ստեղծել աուդիո գիրք

Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ 6 ժամ

Գրիմ եղբայրներ. 2 ժ

Խելոք Էլզան

Սագարած աղջիկը

Հանս Քրիստիան Անդերսեն 2 ժ

Արծաթե դրամը

Թռչող սնդուկը

Շառլ Պերրո 2 ժ

Քնած գեղեցկուհին

Կախարդուհին

Բանաստեղծություններ 4 ժամ

Աշնան երգը Հայրապետ Հայրապետյան

Գարուն Ռաֆայել Պատկանյան

Հայերեն Խաչիկ Դաշտենց

Մայրենի լեզու Սուրեն Մուրադյան

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

ԹԵՄԱ 1 (6 ժամ)
Ժողովրդական բանահյուսություն՝ հանելուկ, հաշվելուկ, շուտասելուկ, անունկապուկ, առած_ասացվածք, խաղիկներ
Նպատակը

Ծանոթացնել ժողովրդական բանահյուսության փոքրածավալ ժանրերին (հանելուկ, հաշվելուկ, շուտասելուկ, անունկապուկ, առած_ասացվածք, խաղիկներ)։

Մշակել արագ ու ճիշտ արտասանություն

Խթանել հիշողության, ուշադրության, տրամաբանական մտածողության կարողությունները։ Զարգացնել ստեղծագործական երևակայությունը, պատկերային մտածողությունը, հումորի զգացումը։

Խնդիրները

★ Ընթերցել տրված գրքերը

★ Տարբերակել բանահյուսության պարզ տեսակները, հասկանալ դրանց բովանդակությունը։

Վերլուծել, քննարկել ինտերակտիվ գործիքների միջոցով։

★ Բաժանվել խմբերի, հստակեցնել պահանջվող վերջնարդյունքներին հասնելու ուղիները

★ Մշակել ստի ու սուտասելուկի միջի տարբերությունները հասկանալու կարողություններ։

Թեմայի վերջնարդյունքները

- Ստեղծել սեղանի խաղ_առաջադրանքներ (քարտեր, գլուխկոտրուկներ)
- Հորինել հանելուկներ, շուտասելուկներ, նկարազարդել։
- Պատրաստել նկար, ձեռարվեստ, էլեկտրոնային համապատասխան գործիքներով խաղեր, նյութեր և այլն։

ԹԵՄԱ 2 (10 ժամ)

Առակ

Նպատակը

Վերլուծել և գնահատել առակի հերոսների արարքները

Ընթերցված առակի հերոսների արարքների մասին մեկնաբանություններ և բնութագրական աշխատանքներ կատարել։

Առակի բովանդակությանը համապատասխան նկարներ ստեղծելու կարողություն։

Խնդիրները

Ընթերցել առակներ

Զարգացնել կարդացած տողերի տակ միտքը հասկանալու ունակություն

Կազմակերպել բանավեճ-քննարկում

Բաժանվել խմբերի և կատարել վերջնարդյունքներին հասնելու համապատասխան աշխատանքներ

Ներկայացնել աշխատանքները

Թեմայի վերջնարդյունքները

Կսովորեն առակների առանձնահատկությունները, կբերեն օրինակներ, կարդացած առակներից Ստեղծել էլեկտրոնային գիրք' Storyjumper ծրագրով (ուսուցչի օգնությամբ) Նկարազարդել կարդացած առակները

ԹԵՄԱ 3 (12 ժամ) ՀԵՔԻԱԹՆԵՐ
Նպատակը
Վերարտադրել հեքիաթի բովանդակությունը՝ դեպքերի զարգացման հաջորդականությամբ։ Հեքիաթը բաժանել մասերի, վերնագրել Ծանոթանալ աշխարհի հեքիաթագիրներին ու նրանց ստեղծագործություններին Գաղափար հեքիաթների տեսակներին' իրապատում, կենդանական, հրաշապատում
Խնդիրները

Պայմաններ ստեղծել հեքիաթների բովանդակության հուզական ընկալման, կերպարային բովանդակությունը մտապահելու համար: Ներկայացնել հեքիաթների կերպարային լեզվի առանձնահատկությունները:

Ճիշտ ընկալել գրական ստեղծագործությունը

Ընթերցել տրված հեքիաթները

Վերլուծել , քննարկել, բանավիճել

Բաժանվել խմբերի , հստակեցնել պահանջվող վերջնարդյունքներին հասնելու ուղիները

Նկարազարդել կարդացած հեքիաթները

Թեմայի վերջնարդյունքները
Ստեղծագործական երևակայության միջոցով հեքիաթը շարունակելու կարողություն Բեմականացնել նախընտրած հեքիաթները

Բանաստեղծություններ 4 ժ

Խնդիրները

Գործնականորեն ծանոթացնել բանաստեղծական հանգավորման նրբություններին։ Զարգացնել բանաստեղծական զգացողությունը, ռիթմի զգացումը։

Ձևավորել արտահայտիչ կարդալու և բանաստեղծությունը անգիր սովորելու ունակություն։

Նպատակ

Ծանոթացում հեղինակների կենսագրությանը

Ամրակայել բանաստեղծությունը արտահայտիչ ընթերցելու կարողություններն ուշադրություն դարձնելով առոգանության նշաններին

Վերլուծել բանաստեղծության միտքը դատողություններ անել բովանդակության շուրջ

Թեմայի վերջնարդյունքները

Կատարելագործել արտասանական ունակությունները

Զևավորել քնարական բանաստեղծությունը արտահայտիչ կարդալու կարողություն:

Զգալ բանաստեղծության տրամադրությունը և այն ներկայացնելու կարողություն

Պահանջվող նյութատեխնիկական բազան

Նկարազարդ գրքեր, համակարգիչ, մատիտներ, ջրաներկ, գուաշ, նկարչական ալբոմներ...

Օգտագործված գրականության ցանկը, հղումները

Վ. Սահակյան
Մանկական բանաստեղծությունների ընտրանի
ՄՀՄ գրատուն
Երևան2011

Ս.Ավետիսյան
Հ. Դանիելյան
Հեքիաթների աշխարհում
Երևան 1972

Մխիթար Գոշ
Վարդան Այգեկցի
“Լույս” հրատարակչություն Երևան 1986

https://twinspace.etwinning.net/116343/home